ՀՏԴ: 929:78(479.25)Եկմալյան+070(479.25)
DOI: 10.54503/2579-2830-2024.1(11)-206

ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼՅԱՆԸ «ՏԱՐԱԶ»-Ի ԷՋԵՐՈՒՄ (1910 ԹՎԱԿԱՆ)

ԷԴՈՒԱՐԴ ՆԵՐՍԻՍՅԱՆ*

Հղման համար. Ներսիսյան, Էդուարդ: «Մակար Եկմալյանը «Տարազի» էջերում (1910 թվական)»: *Արվեստագիտական հանդես,* N 1 (2024): 206-213. DOI:10.54503/2579-2830-2024.1(11)-206

Հոդվածի հիմնական նպատակն է՝ ներկայացնել 1910 թվականի «Տարազ» պարբերականում Մակար Եկմալյանին վերաբերվող հոդվածները: «Տարազի» խմբագիր Տիգրան Նազարյանի նախաձեռնությամբ 1910 թվականի ապրիլի 6-ին «Աղբիւր-Տարազին» կից գրական-գեղարվեստական սալոնում կազմակերպվեց երեկույթ՝ նվիրված Մակար Եկմալյանի հիշատակին: Հոդվածը ներառում է նաև «Աղբյուր-Տարազ» պարբերականի և նրա խմբագիր Տիգրան Նազարյանի մասին համառոտ տեղեկություններ: «Տարազը» հրապարակվել է որպես առանձին պարբերական 1890 թվականից, երբ նրա միակ խմբագիր-հրատարակիչ Տիգրան Նազարյանը 1889 թվականին Պետերբուրգի մամուլի գործերի գլխավոր վարչությունից իր դիմումի համաձայն իրավունք է ստանում «Աղբյուրին» կից հրատարակելու «Տարազ» հավելվածը: Հոդվածում նաև ներկայացված են «Տարազ» պարբերականի նպատակները՝ հայ ժողովրդին հաղորդակից դարձնել սեփական և այլ ժողովուրդների մշակութային կյանքին, ծանոթացնել համաշխարհային գրականության և արվեստի հայտնություններին, դաստիարակել բարության, արժանապատվության, մարդասիրության, հայրենասիրության զգացումներով՝ նրա միջից «արմատախիլ անելով տգեղ և չար որոմը», ինչպես գրված էր իրենց 1890 թ. երրորդ համարի շապիկի վերջին էջում:

Գիտակցելով Մակար Եկմալյանի դերը հայ երաժշտության պատմության մեջ, Տիգրան Նազարյանը «Տարազի» 1910 թ. 3-րդ համարի առաջին էջում հրատարակում է Մ. Եկմալյանի հիշատակին նվիրված գրական-երաժշտական հանդեսի մասին հայտարարությունը: Հանդեսը պիտի տեղի ունենար ապրիլի 6-ին և կայանալու էր Եկմալյանի մահվան 5-ամյակի առիթով, հանդեսին մասնակցելու էին օպերային նվագախումբը՝ իտալացի դրիրժոր Ա.Ա. Պրիվետերայի ղեկավարությամբ, երգեցիկ խումբը՝ երգիչ Մուրադյանի ղեկավարությամբ: Հայ երաժշտական-հասարակական գործիչ Հովսեփ Տեր-Դավթյանը խոսելու էր Մակար Եկմալյանի մասին: Նույն համարում տպագրվել է «Մակար Եկմալեան (Մահուան V-ամեակի առիթով)» հոդվածը: «Տարազի» ապրիլյան համարում տպագրվում է «Մ.Եկմալեանի յիշատակին» վերնագրով հոդվածը, որտեղ արտատպվում են հատվածներ ապրիլի 6-ի հանդեսի մասին «Закавказье»-ում և «Մշակ»-ում տպագրված հոդվածներից և նշվում, որ երեկույթին նվիրված հոդվածներին էջեր են հատկացրել տեղական մյուս թերթերը ևս՝ «Հորիզոն», «Սուրհանդակ», «Խաթաբալա» և «Ամենքը գտնում են, որ երեկոյթը շատ աջող էր և բովանդակալից»:

Բանալի բառեր՝ «Տարազ», Թիֆլիս, Մակար Եկմալյան, 1910 թվական, հոդված, Տիգրան Նազարյան, Հովսեփ Տեր-Դավթյան:

Ներածություն

«Աղբյուր» արևելահայ առաջին մանկապատանեկան ամսագրի խմբագիր

---

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ, eduard.nersisyan@edu.isec.am, հոդվածը ներկայացնելու օրը՝ 01.09.2023, գրախոսելու օրը՝ 17.04.2024, տպագրության ընդունելու օրը՝ 03.06.2024:

Տիգրան Նազարյանը 1889 թ. մայիսի 18-ի գրությամբ Պետերբուրգի մամուլի գործերի գլխավոր վարչությունից իր դիմումի համաձայն իրավունք է ստանում «Աղբյուրին» կից հրատարակելու «Տարազ» հավելվածը, և մինչև 1900 թ. պարբերականի ճակատին գրված են եղել «Աղբյուրի հավելված» բառերը:

Մեր նպատակն է՝ քննության առնել «Տարազի» 1910 թվականի համարներում Մակար Եկմալյանին նվիրված հրապարակումները:

Հիմնական նյութի շարադրանք

«Տարազը» հրատարակվել է որպես առանձին պարբերական՝ լինելով գեղարվեստական, գրական, գիտական, հասարակական, քննադատական, պատկերազարդ շաբաթաթերթ: Երեսուն տարի շարունակ՝ 1890-1919 թվականներին, պարբերականի խմբագիր-հրատարակիչն է եղել Տիգրան Նազարյանը (1858-1926)՝ Տիգո կեղծանվամբ:

Պարբերականը լույս է տեսել հարուստ և բազմաբովանդակ թեմատիկայով՝ ընդգրկելով «Գեղարվեստ և գիտություն», «Պատմական և ժամանակակից վեպեր», «Բանաստեղծություն», «Քննադատություն և կենսագրություն», «Կար ու ձև», «Ճանապարհ և կենսագրություն», «Երաժշտություն և թատրոն», «Ժամանակագրական լուրեր և տեղեկություններ», «Ֆելիետոն», «Ծաղր, առակ և կատակ», «Խորհուրդներ», «Այլ և այլք» և այլ բաժիններ:

«Տարազի» նպատակներից էր հայ ժողովրդին հաղորդակից դարձնել սեփական և այլ ժողովուրդների մշակութային կյանքին, ծանոթացնել համաշխարհային գրականության և արվեստի հայտնություններին, կրթել նրան, դաստիարակել բարության, առաքինության, արժանապատվության, մարդասիրության, հայրենասիրության զգացումներով՝ նրա միջից «արմատախիլ անելով տգեղ և չար որոմը»՝ ինչպես գրված էր իրենց 1890 թ. երրորդ համարի շապիկին:

«Տարազը» էջեր է հատկացրել նաև Մակար Եկմալյանին:

Ինչպես հայտնի է՝ Եկմալյանը կյանքից հեռացավ 49 տարեկանում՝ ուժերի ծաղկման շրջանում, Թիֆլիսում՝ 1905 թ. մարտի 6-ին:

Եվ ահա «Տարազն» իր 1910 թվականի մարտի և ապրիլյան համարներում անդրադառնում է մեծ կոմպոզիտորի մահվան 5-ամյա տարելիցին:

«Տարազի» հիմնադիր ու խմբագիր Տիգրան Նազարյանի նախաձեռնությամբ 1910 թ. ապրիլի 6-ին «Աղբիւր-Տարազին» կից գրական-գեղարվեստական սալոնում կազմակերպվում է երեկույթ՝ նվիրված Մակար Եկմալյանի հիշատակին:

«Տարազի» 1910 թ. 3-րդ համարի առաջին էջում կարդում ենք Մ. Եկմալյանի հիշատակին նվիրված գրական-երաժշտական հանդեսի մասին հայտարարությունը: Հանդեսը պիտի տեղի ունենար ապրիլի 6-ին և կայանալու էր Եկմալյանի մահվան 5-ամյակի առիթով: Տեղեկանում ենք, որ հանդեսին մասնակցելու էին օպերային նվագախումբը՝ իտալացի դրիրժոր Ա.Ա. Պրիվետերայի ղեկավարությամբ, երգեցիկ խումբը՝ երգիչ Մուրադյանի ղեկավարությամբ: Հայ դաշնակահար, մանկավարժ, երաժշտական-հասարակական գործիչ Հովսեփ Տեր-Դավթյանը խոսելու էր Մակար Եկմալյանի մասին՝ բացահայտելով նրա տեղն ու դերը համաշխարհային երաժշտական ընտանիքում:

Ծրագիրը կազմած էր 3 բաժնից,

1-ին բաժնում՝

1) Մակար Եկմալյանի մասին իր հիշողությունները պիտի պատմեր Ստ. Մալխասյանը:
2) a) Notre Pére, Հայր Մեր
   b) Saint-Saint Selgneur Սուրբ Սուրբ Տեր՝ Երգեցիկ խմբի և երաժշտական խմբի կատարմամբ
3) Մակար Եկմալյանի դաշնամուրային Nocturne-ը՝ դաշնակահարուհի օրիորդ Մադլեն Բուղդանյանի կատարմամբ
4) Եկմալյանի «Ով, դու բարեկամ» խմբերգը՝ նվագախմբի և երգեցիկ խմբի կատարմամբ:

2-րդ բաժնում՝

1) Երկու խոսք՝ Եկմալյան – ներկայացնում է Հովսեփ Տեր-Դավթյանը
2) Մ. Եկմալյանի «Ոչ փող զարնենք» խմբերգը՝ օրիորդ Մարինե Սոխակյան-Սոլովյանի, օրիորդ Մելիք-Բաբախանյանի և պարոն Մուրադյանի կատարմամբ
3) «Տեր-կեցցո» Զարեհ Տիրացյանի կատարմամբ
4) Ռոմանոս Մելիքյանի «Աշնանային տաղեր»՝ նվիրված Մ. Եկմալյանին, օրիորդ Մարինե Սոխակյան-Սոլովյանի և Ռոմանոս Մելիքյանի կատարմամբ:
5) «Զեյթունցոց երգը» նվագախմբի և երաժշտախմբի կատարմամբ:

3-րդ բաժնում՝

Հիշողություններ Եկմալյանի շուրջ:

Հայտարարության վերջում կարդում ենք՝ «Մուտքը՝ արվեստագետների, գեղագետների, գրականագետների, լրագրողների, ուսուցիչների և նրանց ընտանիքների համար՝ 50 կ., հոգևորականների՝ 1 ռ. և կողմնակի անձանց համար՝ 2 ռ.» [2, էջ 27]:

Նույն համարում կոմպոզիտորի մահվան 5-րդ տարելիցի առթիվ զետեղվել է Մակար Եկմալյանի հայտնի լուսանկարը և տպագրվել է «Հայր մեր»-ի՝ Եկմալյանի բազմաձայնած տարբերակի նոտաները՝ քառաձայն խառը երգչախմբի համար [7, էջ 29]:

Նույն համարի էջ 38-ում տպագրվել է «Մակար Եկմալեան (Մահւան V-ամեակի առիթով)» հոդվածը [3, էջ 38], որտեղ հեղինակը, ներկայացնելով Եկմալյանի կենսագրական տվյալները, գրում է. «Եկմալեան Ներսիսեան դպրոցում, բացի պատարագի քառաձայն արարողութիւնից, աշակերտներին սովորեցրեց ազգային և այլ երգեր նոյնպէս քառաձայն կամ եռաձայն և պատրաստեց մի քանի տասնեակ խմբապետներ, որոնք այս րոպէիս էլ շարունակում են իրանց մեծ ուսուցչի գործը գաւառներում» [3, էջ 38]: Ապա հեղինակը շարունակում է. «1902 թւի տարեգլուխը ճակատագրական եղաւ Եկմալեանի համար, նա ստացաւ ուղեղի բորբոքում և երկու տարուց աւելի ապրեց իբրև խելագար և, հակառակ բոլոր միջոցների, չբուժւեց: 1905 թ. մարտի 6-ին առաւօտեան նա կնքեց իր մահկանացուն, թողնելով մի պանծալի անուն արւեստի աշխարհում:

Մարտի 13-ին կատարւեց նրա անշուք թաղումը» [3, էջ 38]:

Փաստելով, որ հանգուցյալի բազմաթիվ ստեղծագործությունները գտնվում

են Եկմալյանի եղբոր մոտ, հոդվածագիրն առաջ է քաշում դրանց հրատարակության անհրաժեշտության հարցը. «Մեծ երաժշտագէտի յիշատակը յարգողներին է մնում հոգալ ժամ առաջ լոյս ընծայելու այդ գոհարները, որոնք ճոխացնելու և հարստացնելու են անպայման հայկական ինքնուրույն երաժշտական խղճուկ կեանքը» [3, էջ 38]:

Եկմալյանի ստեղծագործությունների մի մասը՝ աշխարհիկ ստեղծագործությունները, հրատարակվեց այդ հոդվածից ուղիղ 60 տարի անց՝ Հայաստանում: ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը 1970 թվականին՝ Ռոբերտ Աթայանի խմբագրականով [տե՛ս 1, էջ 4-7] ու Մաթևոս Մուրադյանի առաջաբանով [տե՛ս 6, էջ 8-10] հրատարակեց Մակար Եկմալյանի «Խմբերգեր և մեներգեր» ժողովածուն [5], որը կազմել էին Շարա Տալյանը, Մաթևոս Մուրադյանը և Ռոբերտ Աթայանը: Ժողովածուն ընդգրկում էր հայ ժողովրդական երգերի՝ Եկմալյանի մշակումները և կոմպոզիտորի ինքնուրույն երկերը:

«Տարազի» ապրիլյան համարում տպագրվում է «Մ. Եկմալեանի յիշատակին» վերնագրով հոդվածը [4, էջ 48], որտեղ արտատպվում են հատվածներ ապրիլի 6-ի հանդեսի մասին «Закавказье»-ում և «Մշակ»-ում տպագրված հոդվածներից և նշվում, որ երեկոյթին նվիրված հոդվածներին էջեր են հատկացրել տեղական մյուս թերթերը ևս՝ «Հորիզոն», «Սուրհանդակ», «Խաթաբալա» և «Ամենքը գտնում են, որ երեկոյթը շատ աջող էր և բովանդակալից» [4, էջ 48]:

Ըստ «Закавказье»-ի՝ երեկոյթի զարդը «Մ. Եկմալյանի տաղանդավոր և հմտալից ձայնագրած հայերեն պատարագից վերցրած կտորներ էին, որ կատարեցին երգեցիկ և նվագախմբերը: Պարոն Մուրադեանի ղեկավարութեամբ երգեցիկ խմբի և պարոն Պրիվետերայի նւագախմբի կատարած մելոդիական եղանակով *Հայր մերը* բոլոր ներկայ եղողների վրայ զմայլեցուցիչ տպաւորութիւն արաւ:

Երեկոյթում ներկայ եղող հայերի համար, որոնք ընտելացել են մայրենի եկեղեցում լսել միայն անվերջ հակագեղանի, քթում երգեցողութիւնը տիրացուների, զուրկ լսողությունից և մուզիկալ ճաշակից, հոյակապ և գեղագիտօրէն կատարւած եկեղեցական երգեցողութիւնը նոտաներով հաճելի սիւրպրիզ էր, որի համար անկարելի է հոգով շնորհակալ չըլինիլ այդ գեղեցիկ սկզբնաւորութեան նախաձեռնող Տ. Նազարեանին» [4, էջ 48]:

Անդրադառնալով Եկմալյանի մասին երկու հոետորների՝ Մալխասեանի և ամբողջ Թիֆլիսին հայտնի, տաղանդավոր դաշնակահար և մանկավարժ-երաժիշտ Տեր-Դավթյանի ելույթներին, թերթը գրում է. «Հասարակութիւնը լսեց պարոն Տէր-Դաւթեանի գեղեցիկ, խելացի և իմաստալից ճառը, որով նա բնորոշում էր Եկմալեանին, ինչպէս առաջնակարգ երաժիշտ-տէօրէտիկի, որ գրել է անմահ պատարագը և իր ժամանակին արժանացել Անտոն Ռուբինշտէյնի, Ջուզէպէ Վերդու և այլ նշանաւոր երաժիշտների գովեստներին: Տէր-Դաւթեանի փայլուն ճառը մրրկալից ծափահարութիւններով ծածկուեց:

Երեկոյթում մասնակցող երիտասարդ դաշնակահարուհի Մադլեն Բողդանեան, երգիչներ պարոնայք Տիրացեան և Մուրադեան շատ լաւ կատարեցին երաժշտական մի քանի կտորներ» [4, էջ 48]:

Իսկ «Մշակի» գնահատմամբ՝ «Նախ Մալխասեանց երկար խօսեց հանգուցեալ երաժշտագէտի մասին, պատմելով իր անձնական յարաբերութիւնները և յիշողութիւնները: Մալխասեանց կանգ առաւ նրա կեանքի վերջին շրջանի վրայ և պատմեց պատարագի արարողութիւնը ներդաշնակելու պատմութիւնը:

Ապա մեծանուն երաժշտապետի գողտրիկ քառաձայն «Հայր մերը» և «Սուրբ-սուրբը» երաժշտութեամբ երգեց Մուրադեանի խումբը և արժանացաւ ծափահարութիւնների:

Օրիորդ Մ. Բուղդանեան դաշնամուրի վրա նւագեց Եկմալեանի Nocturne:

Օպերային նւագախումբը իտալացի երաժիշտ Ա. Պրիվետերայի ղեկավարութեամբ նւագեց մի քանի կտորներ բուռն ծափահարութիւնների հանդիպելով»:

Այնուհետև՝ «Ով դու բարեկամ» քաղցրահնչյուն խմբերգից հետո, որը Եկմալյանը գրել է Հայր Ղևոնդ Ալիշանի «Պլպուլն Աւարայրի» բանաստեղծության հիման վրա, «հանգուցեալի մասին մի կրակոտ ճառ արտասանեց երաժիշտ Յ. Տէր-Դաւթեանը, որ շատ մօտ ծանօթութիւն ունէր Եկմալեանի հետ:

«Հինգ տարի է, - այսպէս սկսեց հռետորը, - ինչ մեռած է հայ եկեղեցու զարդը ու գեղեցկութիւնը, հինգ տարի է, որ չըկայ մեծ արտիստ Մակար Եկմալեանը....»:

Այնուհետև Տէր-Դաւթեան ծանրացաւ Եկմալեանի բնածին երաժշտական ընդունակութիւնների վրայ, որ ապշանք էր պատճառում բոլոր տեղեակ անձնավորութիւններին: Խօսեց Պետերբուրգի կօնսերվատորիան վերին աստիճանի հաջող ավարտելու մասին: Ապա կանգ առաւ նրա տաղանդաւոր երկասիրութիւններից գլուխ-գործոցի՝ «Պատարագի քառաձայն արարողութեան» վրայ, որը այս րոպէին էլ միակն է ամբողջ աշխարհում իբրև երաժշտական գրուածք, որի ամեն մի նօտան տաս անգամ չափուած, ձեւած է և որի մէջ անաղարտ պահպանւած է հայկական եղանակների բուն ուղին. յիշատակեց այն հոյակապ և սիրալիր ընդունելութեան մասին, որին հանդիպեց այդ մեծ մարդու մեծ գործը աշխարհիս համարեա բոլոր երաժշտագէտների կողմից:

Տէր-Դաւթեան դառնութեամբ խօսեց հայկական ցաւոտ իրականութեան և այն նեխւած մթնոլորտի մասին, որի մէջ ապրում և շնչում էր Եկմալեանը և որի դէմ անկարող եղան դիմադրել Եկմալեանի նուրբ լսողութիւնից էլ ավելի զգայուն նեարդերը...

«Եթէ չըլինէր հայկական կաշկանդիչ իրականութիւնը, - վերջացրեց Տէր-Դաւթեանը, - Եկմալեան պիտի դասվէր համաշխարհային երաժշտական հանճարեղ քննադատների շարքում...»

Դահլիճում մի քանի րոպէ շարունակւեց բուռն ծափահարութիւնը» [4, էջ 48]:

Եզրակացություն

➢ Մակար Եկմալյանի մահվան 5-րդ տարելիցի կապակցությամբ «Տարազի» խմբագիր Տիգրան Նազարյանը կազմակերպում է Գրական-երաժշտական հանդես, որի մասին հայտարարությունը զետեղվում է «Տարազի» 1910 թ. մարտի համարի 1-ին էջում:

➢ «Տարազի» էջերում տպագրվում են Եկմալյանի ստեղծագործությունների նոտաները՝ 3-րդ համարում տպագրվում է Պատարագից Եկմալյանի բազմա-

ձայնած «Հայր մեր» խմբերգը:

➢ «Տարազի» էջերում տպագրվում է հոդված Եկմալյանի մասին, որտեղ ոչ միայն ներկայացվում են կոմպոզիտորի կենսագրական տվյալները, այլև առաջ է քաշվում նրա ստեղծագործական ժառանգության հրատարակության անհրաժեշտության հարցը:

➢ «Տարազն» իր ընթերցողին է ներկայացնում Մակար Եկմալյանի մահվան 5-րդ տարելիցի կապակցությամբ կազմակերպված երեկույթի մասին թիֆլիսյան այլ թերթերի, մասնավորապես՝ «Закавказье»-ի և «Մշակ»-ի արձագանքները ևս:

Գրականություն

1. Աթայան Ռ. Խմբագրի կողմից, Մակար Եկմալյան, Խմբերգեր և մեներգեր, Երևան, «Հայաստան», 1970, էջ 4-7:
2. Գրական գեղագիտակ. Սալոն, «Տարազ», № 3, մարտ, 1910, էջ 27:
3. Ե., Մակար Եկմալեան (Մահուան V-ամեակի առիթով), «Տարազ», № 3, մարտ, 1910, էջ 38:
4. Մ. Եկմալեանի յիշատակին, «Տարազ», № 4, 1910, էջ 48:
5. Մակար Եկմալյան. Խմբերգեր և մեներգեր. Երևան, «Հայաստան», 1970:
6. Մուրադյան Մ. Մակար Եկմալյան. Կենսագրական ակնարկ, Մակար Եկմալյան, Խմբերգեր և մեներգեր. Երևան, «Հայաստան», 1970, էջ 8-10:
7. «Տարազ», № 3, մարտ, 1910, էջ 29:

References

1. Atayan R. Xmbagri koghmic, Makar Ekmalyan, Xmberger ev menerger. Yerevan, “Hayastan”, 1970, ej 4-7.
2. Grakan geghagitak. Salon, “Taraz”, № 3, mart, 1910, ej 27.
3. E., Makar Ekmalean (Mahuan V-ameaki aritov), “Taraz”, № 3, mart, 1910, ej 38.
4. M. Ekmaleani yishatakin, “Taraz”, № 4, 1910, ej 48.
5. Makar Ekmalyan. Xmberger ev menerger. Yerevan, “Hayastan”, 1970.
6. Muradyan M. Makar Ekmalyan. Kensagrakan aknark, Makar Ekmalyan, Xmberger ev menerger. Yerevan, “Hayastan”, 1970, ej 8-10.
7. “Taraz”, № 3, mart, 1910, ej 29.

МАКАР ЕКМАЛЯН НА СТРАНИЦАХ «ТАРАЗА» (1910)

ЭДУАРД НЕРСИСЯН*

Для цитирования: Нерсисян, Эдуард. «Макар Екмалян на страницах «Тараза» (1910)». *Искусствоведческий журнал,* N 1 (2024): 206-213. DOI:10.54503/2579-2830-2024.1(11)-206

Основная цель данной статьи – показать как в 1910 году в периодическом издании «Тараз» напечатаны статьи, посвященные 5-летней годовщине смерти

* Соискатель Института искусств НАН РА, eduard.nersisyan@edu.isec.am, статья представлена 01.09.2023, рецензирована 17.04.2024, принята к публикации 03.06.2024.

одного из основоположников армянской профессиональной музыкальной школы Макару Екмаляну. В 1910 году по инициативе редактора издания «Тараз» Тиграна Назаряна 6 апреля в литературно-художественном салоне при «Ахбюр-Таразе» был организован вечер, посвященный памяти Макара Екмаляна. В статье также приведены краткие сведения о периодическом издании «Ахпюр-Тараз» и его редакторе Тигране Назаряне. Как отдельное периодическое издание «Тараз» издавался с 1890 года, когда его единственный редактор-издатель Тигран Назарян в 1889 году получил право на издание приложения «Тараз», приложенного к «Ахпюру», по его заявлению в Главное управления печатных Дел Петербурга. В статье также представлены цели журнала «Тараз»: информировать армянский народ о культурной жизни своего и других народов, знакомить его с открытиями мировой литературы и искусства, воспитывать в нем чувства доброты, достоинства, человечность, патриотизм и «искоренение уродливых и злых сорняков» из их среды, как было написано на задней обложке их третьего номера 1890 года. Осознавая роль Макара Екмаляна в истории армянской музыки, Тигран Назарян в 1910 году издает «Тараз». На первой странице 3-го номера объявление о литературно-музыкальном вечере, посвященном памяти М. Екмаляна. Вечер должен был состояться 6 апреля и был приурочен к 5-летию со дня смерти Екмаляна. В нем должны были принять участие оперный оркестр под руководством итальянского дирижера А.А. Приветеры и певческий коллектив под руководством певца Мурадяна. Армянский музыкальный и общественный деятель Овсеп Тер-Давтян собирался рассказать о Макаре Екмаляне. В том же номере была опубликована статья «Макар Екмалеан (к 5-летию со дня смерти)». В апрельском номере «Тараз» публикуется статья «Памяти М. Екмалеана», где печатаются отрывки из статей, опубликованных в «Закавказье» и «Мшак» о вечере 6 апреля, и отмечается, что другие местные газеты «Горизонт», «Сурхандак», «Хатабала» тоже посвятили страницы статьям, посвященным вечеру и все считают, что «вечер был очень успешным и содержательным».

Ключевые слова: «Тараз», Тифлис, Макар Екмалян, 1910 год, статья, Тигран Назарян, Овсеп Тер-Давтян.

MAKAR YEKMALYAN ON THE PAGES OF "TARAZ" (1910)

EDUARD NERSISYAN*

For citation: Nersisyan, Eduard. "Makar Yekmalyan on the pages of "Taraz" (1910)", *Journal of Art Studies,* N 1 (2024): 206-213. DOI:10.54503/2579-2830-2024.1(11)-206

The main purpose of the article is to present the articles of "Taraz" periodical of 1910 referring to Makar Yekmalyan. Particularly in 1910, with the initiative of "Taraz" editor Tigran Nazaryan, a soiree dedicated to the memory of Makar Yekmalyan was held on April 6 in the literary and artistic salon attached to "Aghbyur-Taraz". The article also includes brief information about "Aghbyur-Taraz" periodical and its editor Tigran Nazaryan. "Taraz" had been published as a separate periodical since 1890, when its sole editor-publisher Tigran Nazaryan received the right to publish "Taraz" supplement attached to "Aghbyur" in 1889, according to his application to the Main Department of Press Affairs of St. Petersburg. The article also presents the goals of "Taraz" periodical: to share the Armenian people's own and other people's cultural life, to familiarize them with the outstanding works of world literature and art, to educate them with feelings of kindness, dignity, humanity, patriotism and "uproot the ugly and evil weeds" from among them, as was written on the back cover of their third edition of 1890. Realizing the role of Makar Yekmalyan in Armenian musical history, Tigran Nazaryan published the announcement of the literary-musical performance dedicated to the memory of M. Yekmalyan on the first page of the 3rd edition of "Taraz" 1910. The concert was supposed to take place on April 6 and was to be held on the occasion of the 5th anniversary of Yekmalyan's death. The opera orchestra conducted by the Italian conductor A.A. Privetera and singer Muradyan's vocal group were to participate in the concert. Armenian musical and public figure Hovsep Ter-Davtyan was going to talk about Makar Yekmalyan. In the same edition, the article "Makar Yekmalyan" (on the occasion of the 5th anniversary of his death)" was published. In the April edition of "Taraz", an article entitled "In memory of M. Yekmalean" was published, where excerpts from the articles published in "Zakavkazye" and "Mshak" about the April 6th event were printed, and was noted that other local newspapers "Horizon", "Surhandak", "Khatabala" also devoted pages to the articles dedicated to the soiree and all found the "event successful and meaningful".

Key words: "Taraz", Tiflis, Makar Yekmalyan, 1910, article, Tigran Nazaryan, Hovsep Ter-Davtyan.

---

* PhD candidate at the NAS RA Institute of Arts, eduard.nersisyan@edu.isec.am. The article was submitted on 01.09.2023, reviewed on 17.04.2024, accepted for publication on 03.06.2024.